Դեղձավանի հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի

Ռուսաց լեզվի և հինգերորդ դասարանի դասղեկ՝ Գոհար Գաբրիելյանի

2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի հաշվետվություն

Տնօրեն՝ Հասմիկ Ստ. Բեջանյան

Դեղձավանի հիմնական դպրոցի Ռուսաց լեզվի ուսուցչուհի Գոհար Գաբրիելյանի տարեկան հաշվետվություն

ուստարի

Պլանավորել և իրականացրել եմ սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան:

Ուսումնական գործընթացը իրականացրել եմ ապահովելով կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների , հմտությունների եւ առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ եւ ժամանակակից տեխնոլոգիաներ:

Դասավանդման ընթացքում սովորողների մոտ նկատել եմ հետևյալ կրթական կարիքները՝արտադասարանական ընթերցանության գրականության պակաս,բանավոր սահուն խոսքի դժվարություն,դիդակտիկ նյութերի պակաս:Նշված թերությունները լուծել եմ հետևյալ եղանակներով՝ ՏՀՏ-ի կիրառմամբ թեմայի ամփոփում,հետազոտական աշխատանքների միջոցով:

Նպաստում եմ սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորմանը, դաստիարակում հայրենասիրություն, ձեվավորում պատշաճ վարքագիծ եւ վարվելակերպ հետևյալ մեթոդներով՝անձնական օրինակի, իրավիճակների ներկայացում և քննարկում,հերոսական պատմությունների ներկայացմամբ, թեմատիկ միջոցառումների իրականացմամբ,դասարանային մշակույթի կանոնների պահպանմամբ:

Իմ առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ զարգացրել եմ ինքնուրույնություն, նախաձեռնություն եւ ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները, հետևյալ մեթոդներով՝ շնորհանդեսների ներկայացում,դերախաղ, համագործաքցային աշխատանքներ,պաստառների կազմում և ներկայացում,

հետազոտական աշխատանքներ,անհատական աշխատանք, նախագծային աշխատանք:

Նպաստում եմ սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձեւավորմանը հետևյալ մեթոդներով՝ ինքնաանդրադարձի թերթիկների, վերլուծական առաջադրանքների միջոցով:

Հարգում և պաշտպանում եմ սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը,խստորեն հետևելով և առաջնորդվելով երեխայի իրավունքների պահպանման մասին ՀՀ օրենքով՝https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115

Հետևողականորեն կատարելագործում եմ առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնում ստեղծագործական , հետազոտական և նախագծային աշխատանքներ: 9-րդ դասարանում իրականացրել եմ նախագծային աշխատանք հետևյալ թեմայով՝ Цивилизации далекие и близкие как культурное наследие человечества.» Մասնակցել եմ Առողջ ապրելակերպ խմբակի մենթորական վերապատրաստումներին և ստացել մենթորի հավաստագիր: Կիսամյակի ընթացքում իրականացրել եմ հետևյալ ստեղծագործական աշխատանքները՝ 1) Սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի օրվա առթիվ միջոցառում,2) Ոսկե աշուն,3) Ամանորի հեքիաթ:

Համագործակցում եմ սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման եւ ընտանեկան դաստիարակության հարցերում, կազմակերպել և վարել եմ ծնողական ժողովներ իմ դասղեկական դասարանում, ծնողների առջև բարձրացրել եմ հարցեր հոտևյալ թեմաների շուրջը՝ ձևավորող գնահատման նրբությունները, առարկայացանկում նոր խմբակի/Առողջ ապրելակերպ-ի/ ներառումը, աշակերտների անձնական տարածքի անհրաժեշտությունը, ծնողի դերն ու նշանակությունը աշակերտի ձևավորման գործընթացում, ուսումնառությունը՝ կարևորագույն գործընթաց:

Համագործակցում եմ գործընկերների հետ փորձի փոխանակման եւ մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով, կատարել եմ դասալսումներ հետևյալ գործընկերների մոտ՝ Հովհաննիսյան Արաքսյա, Հովհաննիսյան Էլեոնորա:

Հանդիսանում եմ հաստատության հումանիտար մեթոդմիավորման

նախագահ, կազմակերպում և իրականացնում եմ առարկայական մասնախմբի աշխատանքներն:

Իրականացրել եմ մեթոդական զեկուցում/սեմինար մեթոդմիավորման ուսուցիչների համար: Բոլոր դասալսումներից հետո մասնակցել եմ դասի քննարկմանը եւ կատարել եմ անհրաժեշտ հետեւություններ:

Պահպանում եմ ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:

Կազմել եմ իմ առարկայի թեմատիկ պլանը բոլոր դասարանների համար:

Գրել եմ դասերի պլանները եւ դրանք պահպանել եմ: Կազմել եմ թեմատիկ գրավոր աշխատանքների տեքստերը ըստ անհրաժեշտության: Մշակել եմ բանավոր եւ գրավոր գնահատման սկզբունքները: Իրականացրել եմ ձևավորող գնահատում համապատասխան մեթոդներով և գործիքակազմով:

Աշխատանքի ընթացքում պահպանել եմ ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները և չեմ ստացել որևէ դիտողություն և նկատողություն:

Առարկա՝ ռուսաց լեզու

Ուսուցիչ՝ Գոհար Գաբրիելյան

Ամիս, ամսաթիվ՝ 27/12/23թ

Գոհար